

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #06

Հունիս 2018

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	5
Շինարարություն	8
R&D	11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
Կոսմետիկա	14
Դեղագործություն	15
Այլ ոլորտներ	17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մննդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Փնտրվում են դիստրիբյուտորներ՝ ոգելից խմիչքների համար

Գերմանիայի Արևելյան Սաքսոնիա տարածաշրջանում գտնվող սկսնակ ընկերությունը մասնագիտացած է ոգելից խմիչքների արտադրության ոլորտում: Ընկերությունը, որն արտադրում է լիկյորներ, կոնյակներ և ոգելից խմիչքներ՝ տարածաշրջանային արտադրանքի հիման վրա, ցանկանում է ընդլայնել իր հնարավորությունները և փնտրում է միջազգային գործընկերներ: Ավելին, ՓՄՁ-ն փնտրում է գործընկերներ, որոնք հետաքրքրված են տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. [BODE20170428001](#)

Ստեվիայի դիստրիբյուտորը Լեհաստանից ցանկանում է ստորագրել եթապայմանագրային համաձայնագրեր՝ քաղցրավենիք արտադրող ընկերությունների հետ

Լեհական ընկերությունը փնտրում է ստեվիայի պահանջարկ ունեցող ընկերություններ արտերկրում: Համագործակցությունը կլինի եթապայմանագրային համաձայնագրի տեսքով: Լեհական ընկերությունը ցանկանում է վաճառել ստեվիան քաղցրավենիքի գործարանին կամ քաղցրավենիք արտադրողին, ապա ցանկանում է գնել այդ արտադրված քաղցրավենիքները (որոնք պարունակում են ստեվիա) և տարածել դրանք Լեհաստանում, Ղազախստանում և Ուզբեկստանում:

Ծածկագիր. [BOPL20180123004](#)

Գլյուտեն չպարունակող, շատ սպիտակուցներ պարունակող խորտիկների ապրանքանիշը փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ ողջ աշխարհում:

Միացյալ Թագավորությունում գտնվող ընկերությունն արտադրում է առանց գլյուտեն, շատ սպիտակուցներ պարունակող ֆլափջեք (վարսակից քաղցր թխված խորտիկ) և թխվածքաբլիթներ, որոնք ձեռագործ են, թխվում են վառարանում և հիանալի համ ունեն: Բազմազան համերով այս ապրանքանիշը սիրված է բուսակերների, առողջության և ֆիզիկական ակտիվությունը գնահատողների կողմից, ովքեր չեն հաշտվում վատ համի հետ: Ընկերությունը ցանկանում է վաճառել իր արտադրանքն արտերկրում և փնտրում է փորձված դիստրիբյուտորներ և գործակալներ սննդի ոլորտում ողջ աշխարհում:

Ծածկագիր. BOUK20170524004

Ռումինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և/կամ առևտրային գործակալներ

Ռումինական ընկերությունը, որն արտադրում է ավանդական “ghiodem” (թաթարական չորացված երշիկ), պաստրամի, երշիկեղեն և այլ մսամթերք՝ օգտագործման ընթացքում կիրառելով միայն բնական բաղադրիչներ և բույսերի ու համեմունքների յուրահատուկ համադրություն, փնտրում է տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BORO20180419001

Գործարար համագործակցության հարցումներ

Հրուշակեղենի և քաղցրեղենի ոլորտից պորտուգալական ընկերությունը փնտրում է աղացած համեմունքներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Պորտուգալական ընկերությունը Մադեիրա կղզուց, որը մասնագիտացած է ավանդական տարածաշրջանային տորթերի, թխվածքաբլիթների և քաղցրեղենի ոլորտում, ինչպես օրինակ՝ մեղրով տորթ (եղեգնաշաքարի մեղր), մեղրով թխվածքաբլիթներ և քաղցրեղեն, փնտրում է բաղադրիչների մատակարարներ, հատկապես աղացած համեմունքներ (մշկընկույզ, մեխակ, անիսոն և դարչին)՝ տարածման ծառայությունների հաստատման համար:

Ծածկագիր. BRPT20170426001

Միացյալ Թագավորությունում հիմնված ընկերությունը փնտրում է արևածաղկի սերմերի մատակարար

Միացյալ Թագավորությունում հիմնված ընկերությունը զբաղվում է գյուղատնտեսական ապրանքների առևտրով: Ընկերությունն ունի գրասենյակներ Լոնդոնում և Մերձավոր արևելքի, ինչպես նաև ներկայացուցչություն Դուբայում՝ Աֆրիկայի և Ասիայի հաճախորդների համար: Ընկերությունը փնտրում է արևածաղկի սերմերի մատակարար:

Ծածկագիր. BRUK20180418001

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է պաղպաղակ, փնտրում է կաթի և կրեմի մատակարարներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է պաղպաղակի արտադրության ոլորտում, արված ամբողջովին կաթից և կրեմից, հետաքրքրված է առևտրային գործընկերներով. կաթի և կրեմի մատակարարներ են որոնվում տարածման ծառայությունների ներքո :

Ծածկագիր. BRRU20180117001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը մասնագիտացած է ավանդական և նորաձև գործվածքների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ

Փոքր անկախ ընկերությունը, որը գտնվում է Միացյալ Թագավորության Իսթ-Միդլենդս տարածաշրջանում, մասնագիտացած է գործվածքի և տեքստիլի ոլորտում և փնտրում է նոր գործընկերներ ողջ աշխարհում: Ընկերությունը մեծ պորտֆել ունի, որն առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOUK20180503002

Թուրքական արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է տեքստիլի ոլորտում և արտադրում է սղամարդկանց, կանանց վերնազգեստի համար նախատեսված գործվածքներ տարբեր կոմպոզիցիաներով, փնտրում է դիստրիբյուտորներ:

Ծածկագիր. BOTR20180219001

Կանանց և երեխաների նորաձևության ոլորտում գործող լյուքս դասի ապրանքանիշի համար որոնվում են դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունը, որը լյուքս դասի յուրահատուկ, օրիգինալ հագուստ է արտադրում կանանց և երեխաների համար, գործում է Ժամանակակից միտումների և ձեռագործ նախագծման վրա: Ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականին և այժմ փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր միջազգային շուկան ընդլայնելու նպատակով:

Ծածկագիր. BOPL20180425001

Ձեռագործ ապրանքներ արտադրող փոքր ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական արտադրող փոքր ընկերությունը, որն արտադրում է կանանց համար նախատեսված ցանկացած տեսակի վերնազգեստ, բրոյս խաղալիքներ երեխաների համար և տան համար նախատեսված դեկորատիվ պարագաներ՝ բարձեր և պուֆեր, փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր բիզնեսը եվրոպական երկրներում ընդլայնելու նպատակով: Արտադրատեսակները եզակի են: Ընկերությունը գործում է միայն հատուկ պատվերով՝ հաճախորդի կողմից պատվիրված մի քանի արտադրանքով:

Ծածկագիր. BOPL20180517001

Իտալական ընկերությունը փնտրում է տարածման և ֆրանչայզի հնարավորություններ

Իտալական ընկերությունը, որն արտադրում է էլեգանտ և ֆորմալ հագուստ 0-ից 6 տարեկան երեխաների համար, փնտրում է տարածման և ֆրանչայզի հնարավորություններ այլ

Եվրոպական երկրներում: Ընկերությունը հանդիսանում է բարձրակարգ նորաձևության առաջատարներից 0-6 տարեկան երեխաների ապրանքանիշերի մեջ և փնտրում է համագործակցություն դիստրիբյուտորների հետ բարձրակարգ կետերում և բուտիկներում (ավանդական կամ օնլայն): Ընկերությունը նաև հետաքրքրված է որակյալ խանութի հիմնմամբ իր անունով՝ ֆրանչայզի պայմանագրի ներքո:

Ծածկագիր. BOIT20180117001

Ձեռագործ, ավանդական քաթանե պայուսակներ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Քաթանե ապրանքներ արտադրող բրիտանական ընկերությունը փնտրում է նորաձևության, DIY (պատրաստիք ինքդ) և տան համար նախատեսված ապրանքների շուկաներում գործող գործակալներ և դիստրիբյուտորներ՝ իրենց ձեռագործ ավանդական քաթանե պայուսակները տարածելու նպատակով:

Ծածկագիր. BOUK20180409001

Երեխաների համար նախատեսված գույները փոխող անձրևանոցների համար փնտրվում են դիստրիբյուտորներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է երեխաների համար վերնագգեստի տեսականի, որոնք փոխում են գույներն անձրևի տակ: Ընկերությունը ցանկանում է զարգացնել իր ապրանքանիշը և աշխատել Եվրոպական դիստրիբյուտորների, ինչպես նաև գործակալների հետ:

Ծածկագիր. BOUK20180517001

Գործարար համագործակցության հարցումներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է տրիկոտաժ արտադրողներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է արտադրող գործընկեր Եվրոպայում՝ մի շարք տրիկոտաժե ապրանքներ արտադրելու համար: Ընդ որում գործընկերը կարող է արտադրության մեջ օգտագործել Միացյալ Թագավորության ընկերության կողմից արտադրված կամ հաջող գործընկերոջ կողմից մատակարարված թելերը: Արտադրական հնարավոր համաձայնագիրը կարող է լինել ենթապայմանագրային կամ աութսորսինգային համաձայնագրի տեսքով:

Ծածկագիր. BRUK20180220001

Կոշիկի և հագուստի (երեխաների և մեծերի) դիստրիբյուտորը, որը հիմնված է Բելգիայում, Նիդերլանդներում և Լյուքսեմբուրգում, փնտրում է բրենդներ՝ տարածման նպատակով

Բելգիական ընկերությունն ավելի քան 50 տարի հանդիսանում է որակյալ բրենդերի (կոշիկ և հագուստ երեխաների և մեծերի համար) դիստրիբյուտորը Բենիլյուքսում: Ընկերությունը կենտրոնացած է որակյալ պատրաստված, լավ և դիմացկուն նյութերց արված ապրանքների վրա: Հինգ փորձառու վաճառողները մշտական կապ ունեն Բենիլյուքսի մանրածախ առևտրականների հետ: Ընկերությունը փնտրում է կոշիկի, հագուստի և աքսեսուարների բրենդներ՝ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունը պատրաստ է համագործակցել նաև առևտրային համաձայնագրերի համար:

Ծածկագիր. BRBE20170615001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

ՓՄՁ-ն մշակել է նոր մեթոդ հին շինությունների ինտերիերի ջերմամեկուսացման համար. այն փնտրում է դիստրիբյուտորներ և ներդրողներ

Ավստրիական ընկերությունը, որը շուրջ 25 տարի է, ինչ գործում է ջերմային էներգաարդյունավետության ոլորտում, մշակել է նորարարական մեթոդ՝ հին շինությունների ներքին ջերմային վերականգնման համար: Որպեսզի մուտք գործի նոր շուկաներ, ընկերությունը ցանկանում է հաստատել տարածման ծառայությունների կամ ընկերության ձեռքբերման համաձայնագրեր: Ընկերությունը որպես համագործակցության տեսակ դիտարկում է նաև ֆինանսական համաձայնագիրը:

Ծածկագիր. BOAT20180416001

Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Արտադրողը Միացյալ Թագավորությունից, որն ունի ներկերի, լաքերի, ծածկույթների, սոսինձների և սալիկների համար խոշոր արտադրական հզորություն, փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ Եվրոպայում:

Ընկերությունն առաջարկում է շինարարությամբ և շինությունների վերանորոգման ոլորտում կիրառվող ապրանքների լայն տեսականի՝ ինչպես լուծվող, այնպես էլ ջրի վրա հիմնված համակարգեր, բայց մասնագիտացած է Ցածր ցնդող օրգանական բաղադրության և Զրո ցնդող օրգանական բաղադրության տեխնոլոգիաների վրա: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել դիստրիբյուտորների իր ցանցը և փնտրում է նոր գործընկերներ Եվրոպայում:

Ծածկագիր. BOUK20180501001

Պլաստիկ պատուհաններ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է պլաստիկ պատուհանների (տարբեր ձևի և օբյեկտի համար նախատեսված պատուհան, բնակարանից մինչև առանձնատուն, արտադրամասից մինչև գործարան) արտադրության ոլորտում, փնտրում է օտարաերկրյա գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրեր կնքելու համար:

Ծածկագիր. BORU20161124001

Շինարարական ապրանքներ արտադրող բուլղարական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Բուլղարական ընկերությունը, որը կողպեքներ և բռնակներ է արտադրում դռների համար, փնտրում է հնարավոր գործընկերներ Եվրոպայում և երրորդ երկրներում: Իր արտադրանքն արտերկրում ընդլայնելու համար ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOBG20161209002

Իտալական ՓՄՁ-ն և ճկուն ֆոտոգալվանային վահանակ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ

Իտալական նորարարական ընկերությունը մշակել է բարակ և ճկուն ֆոտոգալվանային վահանակ, որը կարող է կիրառվել տարբեր սարքավորումներում: 2 միլիմետրանոց բարակություն ունեցող վահանակը նաև չափազանց ճկուն է, չի պարունակում ապակի, դիմադրող է, թեթև, թափանցիկ և հարմար: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր բիզնեսն արտերկրում և առաջարկում է առևտրային համաձայնագրեր և տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ «կանաչ» բացօթյա կահույքի շուկայում գործող

գործընկերոջը:

Ծածկագիր. BOIT20160513001

Ընկերությունը, որը մասնագիտացած է բոլորը մեկում՝ էներգիա, տաք/սառը օդ և տաք ջուր արտադրող արեգակնային տանիքի մոդուլների ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆրանսիական ընկերությունը մշակել է շենքերին ինտեգրված ֆոտոբոլտիկայի (BIPV) տանիքների մոդելներ, որը հնարավորություն է ստեղծում միևնույն ժամանակ արտադրել էներգիա, տաք ջուր, տաք/սառը օդ, միևնույն ժամանակ ապահովելով տանիքի ջրակայունությունը: Ընդլայնելու համար իր գործունեությունը, ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում, ովքեր մասնագիտացած են տնային տնտեսությունների վերականգնվող էներգիայի և տանիքների նյութերի ոլորտներում:

Ծածկագիր. BOFR20180604001

Գործարար համագործակցության հարցումներ

Պորտուգալական ինժեներական ընկերությունը, որը գործում է նախագծային կառավարման, շինարարության և վերականգնման ոլորտում, փնտրում է շինանյութեր մատակարարող գործընկեր:

Պորտուգալական ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին Շամուշկայում, որը փոքր քաղաք է երկրի կենտրոնական մասերում, բայց նրա գործունեության վայրը և անձնակազմը գտնվում են Լիսաբոնի մետրոպոլիտենի տարածաշրջանում: Ընկերությունը տրամադրում է ճարտարապետական և նախագծային կառավարման ծառայություններ, ինչպես նաև իրականացնում է շենքերի շինարարական և վերականգնողական աշխատանքներ: Ընկերությունը փնտրում է շինանյութերի ինչպես օրինակ՝ գիպսաստվարաթղթի, փայտի և պատուհանների շրջանակների մատակարարներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRPT20170404001

Առևտրային գործակալը փնտրում է արտադրողներ

Ֆրանսիական առևտրային գործակալը փնտրում է բոլոր տիպի շինությունների օդրակման և հովացման (HVAC) համար նախատեսված արքեսուարներ և սարքավորումներ: Ֆրանսիական առևտրային գործակալն այժմ ցանկանում է ընդլայնել իր պորտֆելն

արտերկրում և փնտրում է նոր գործընկերներ, որոնք գործում են դարակաշարերի պրոֆիլների և շրջանաձև և/կամ ուղղանկյուն խողովակների արքեստուարներով կոնստրուկցիայի, օդափոխման միավորների արտադրության ոլորտներում՝ նրանց արտադրանքը Ֆրանսիայում ներկայացնելու համար: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BRFR20170215002

R&D



ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից փնտրում է գործընկերներ Նորարար Միացյալ Թագավորության 5-րդ կամ 6-րդ Բաց Ռաունդի առաջարկի համար, որպեսզի մշակեն բարձր արդյունավետություն ունեցող չհովացող այրման շարժիչ

Լոնդոնում հիմնված ՓՄՁ-ն մշակում է չհովացող այրման շարժիչ (ICEs) բոլոր հիբրիդային կիրառությունների, վառելիքներ համար, այդ թվում ջրածնային: Պտուտահաստոց/գլանների հավաքածուն պատրաստվում է կառուցվածքային կերամիկայից: Վառելիքի էներգիայի մեկ երրորդը ներկայումս ցրվում է սառեցման համակարգերում. այդ թափոնները վերանում են: Գործընկերները որոնվում են վառելիքի մատակարարման, կերամիկական նյութերի, տուրբո լիցքավորման և արտանետման էներգիայի վերականգնման ոլորտներից, որպեսզի դիմեն Նորարար Միացյալ Թագավորության 5-րդ կամ 6-րդ Բաց Ռաունդին:

Ծածկագիր. RDUK20180411002

Հորիզոն 2020/ MSCA. որոնվում են հետազոտողներ՝ օպտիկական էլեկտրոնիկայի/ ֆոտոնիկայի ոլորտներից

Գերմանական ընկերությունը, որը գործում է ճշգրիտ ինժեներիայի ոլորտում, փնտրում է տեխնիկական կարողություններով հետազոտողներ օպտիկական էլեկտրոնիկայի/ ֆոտոնիկայի ոլորտներից՝ հեռակառավարման սարքեր մշակելու նպատակով: Այդ սարքերի միջոցով ընկերությունների արտոնագրված տեխնոլոգիայի հիման վրա հայտնաբերվում են

մասնիկների և օբյեկտների արագությունը: Նպատակն է՝ համատեղ դիմել Մարիա Սկլոդովսկայա-Կյուրի գործողությունների (MSCA) երիտասարդական հետազոտական դրամաշնորհին Հորիզոն 2020 ծրագրի ներքո (MSCA-IF-2018):

Ծածկագիր. RDDE20180509001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը ռեստորանների համար նոր ծրագիր է թողարկում և փնտրում է գործընկերներ

Միացյալ Թագավորությունում հիմնադրված ընկերությունը մշակել է նոր ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում հաճախորդներին միանալ հերթին առանց ներկա գտնվելու այդ վայրում: Ծրագիրը մեկ ամիս փորձարկվել է լոնդոնյան ռեստորանում, և հանգստյան օրերին ռեստորանի եկամուտը աճել է 15%-ով: Այժմ ընկերությունը նախապատրաստում է միջազգային մեկնարկ այս ծրագրի համար և փնտրում է ռեստորաններ, որոնցում նախապես սեղաններ չեն պատվիրվում և դրսում կուտակվում են հերթեր: Համագործակցությունը նախատեսվում է ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOUK20180522003

Ֆրանսիական տեխնոլոգիական ընկերությունը, որը թվային լուծումներ է մշակում մաշկաբանության ոլորտի կլինիկական փորձարկումների կառավարման համար, փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆրանսիական սկսնակ ընկերությունը, որը թվային լուծումներ է մշակում մաշկաբանության, էսթետիկայի և կոսմետիկայի ոլորտների կլինիկական փորձարկումները կառավարելու համար, արդեն իսկ ընդգրկված է անդրազգային համագործակցության մեջ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ էլեկտրոնային առողջապահության ոլորտում:

**Տարածման համար առաջարկվում է հեռարձակման համար առաջարկվող թվային տրաֆիկ-
համակարգ**

Գերմանական ընկերությունը, որը նաև հանդիսանում է Հորիզոն 2020-ի շահառու, մշակել է մոբիլ տրանսպորտային ենթակառուցվածքի հավելված՝ բաղկացած 3 մոդուլներից. ավտոկայանատեղերի հավասարակշռման համակարգ, ավտոճանապարհների և սխալ ճանապարհով երթևեկող վարորդների հայտնաբերում, ինչպես նաև ճանապարհային երթևեկության տեղեկատվական համակարգ:

Ծածկագիր. BODE20180424001

Գործարար համագործակցության հարցումներ

SS ընկերությունը փնտրում է մրցակցային առավելություններով Wi-Fi ապրանքներ կամ ծառայություններ՝ դրանք հունական շուկայում ներկայացնելու նպատակով

Փոքր հունական ընկերությունը հետաքրքրված է այն երկրի շուկայով, որը կարող է տրամադրել Wi-Fi ապրանքներ կամ ծառայություններ: Ընդ որում, այդ ապրանքները կամ ծառայությունները պետք է ունենան մրցակցային առավելություններ: Ընկերությունը բաց է արտերկրյա առաջարկները և տարբեր տիպի ապրանքները ու ծառայությունները ուսումնասիրելու համար, քանի դեռ դրանք շուկայական մեծ հեռանկար կունենան, հաճախորդների կողմից կընդունվեն և հաճախորդի կարիքները ընդլայնված կերպով կբավարարեն: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRGR20180525001



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը, որն արտադրում է օրգանական կոսմետիկա, փնտրում է դիստրիբյուտորներ և գործընկերներ՝ արտադրական/ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է սերտիֆիկացված օրգանական կոսմետիկայի արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր կարող են վաճառել իր արտադրանքը մասնավոր պիտակով: Ընկերությունը հետաքրքրված է նաև այն օտարերկրյա ընկերությունների հետ արտադրական կամ ենթապայմանագրային համագործակցության համաձայնագրերով, որոնք ցանկանում են գտնել գործընկերներ արտերկրում:

Ծածկագիր. BOBG20171212001

Կենսաբանության բնագավառում մաշկի խնամքի և առողջապահության ոլորտում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Իսպանական տեխնոլոգիաների վրա հիմնված ընկերությունը մասնագիտացած է կոսմետիկ ապրանքների (կենսաբանության բնագավառում մաշկի խնամքի և առողջապահության ոլորտ) արտադրության ոլորտում և փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում:

Ծածկագիր. BOES20171116001

Հունգարական պրեմիում դասի երիտասարդացնող կոսմետիկա արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ/առևտրային գործակալներ

Հունգարական ընկերությունը, որը շուրջ 20 տարվա փորձ ունի կոսմետիկայի արտադրության ոլորտում, կոսմետիկա է արտադրում յուրահատուկ բաղադրիչներից (ինչպես օրինակ՝ ավանակի կաթ, շափյուղ, խխունջի գել), փնտրում է դիստրիբյուտոր

գործընկեր, ովքեր ունեն մշտական գնորդների ցանց (խանութներ, օնլայն խանութներ, կոսմետիկայի ոլորտին են առնչվում և այլն)՝ իրենց կոսմետիկան եվրոպական շուկայում իրացնելու նպատակով: Ընկերությունը հետաքրքրված է նաև առևտրային գործակալների հետ համագործակցությամբ, ովքեր կգրադվեն ընկերության արտադրանքի վերավաճառքով:

Ծածկագիր. BOHU20180226001

Դեղագործություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Իտալական ընկերությունը, որը գործում է դեղագործության և բուժական սննդի ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է դեղագործական և բուժական սննդի մշակման և մարքեթինգի ոլորտում, առաջարկում է սննդային հավելումների, բուժական կոսմետիկայի, դեղագործության և բժշկական սարքավորումների առևտրայնացման և խթանման համար հարմարեցված աջակցություն՝ Իտալիայում՝ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOIT20180507007

Ֆրանսիական մաշկաբանական լաբորատորիան փնտրում է դիստրիբյուտորներ մաշկա-կոսմետոլոգիական խնամքի ապրանքների համար

Ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է դեռահասների և հասուն կանանց բշտիկների, մաշկի մուգ բծերի, խոնավության, արևապաշտպանության և այլնի համար

նախատեսված մաշկա-կոսմետոլոգիական ապրանքների ոլորտում, փնտրում է գործընկերներ, որոնք մասնագիտացած են դեղատնների ոլորտում՝ նրանց հետ տարածման ծառայությունների համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BOFR20180427002

Շվեդական ընկերությունը, որն առաջարկում է լյուքս դասի էլեկտրական ատամի խոզանակ և հիմնադրել է պրեմիում դասի ապրանքանիշ, փնտրում է դիտորիքուտորներ՝ ատամնաբուժության ոլորտում

Երիտասարդ և հավակնոտ շվեդական ընկերության, որն արտադրում է էլեկտրական լյուքս դասի ատամի խոզանակ, արտադրանքը ներկայացված է մի քանի շուկաներում: Ընկերությունն առաջարկում է էքսկլյուզիվ տարածման ծառայությունների համաձայնագրեր Ասիայի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հետաքրքրված մեծածախ և մանրածախ վաճառողներին՝ իրենց առաջատար/լյուքս դասի կենցաղային էլեկտրոնիկայի, առողջապահական և խնամքի միջոցների ոլորտի համար:

Ծածկագիր. BOSE20180208001

Գործարար համագործակցության հարցումներ

Բելգիական ընկերությունը փնտրում է նորարարական առողջապահական ապրանք կամ սարքավորում՝ դրանք Բենիլյուքսում տարածելու համար

Փոքր բելգիական ընկերությունը փնտրում է նորարարական, շուկայահանմանը պատրաստ ապրանք կամ սարքավորում առողջապահական ոլորտում՝ դրանք Բելգիայում, Նիդերլանդներում և Լյուքսեմբուրգում վաճառելու և/կամ տարածելու նպատակով:

Ծածկագիր. BRIL20180207001

Գերմանական օնլայն խանութը փնտրում է տարածման ծառայություններ

Գերմանական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է տնային խնամքի պարագաների արտադրության ոլորտում, ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է ապրանքներ՝ կենցաղային խնամքի, շարժունակության, առողջության վերականգնման, դիաբետի և անկողնային խնամքի համար: ՓՄՁ-ն աշխատեցնում է B2C օնլայն խանութը՝ այդ տիպի ապրանքները շուկայահանելու նպատակով: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Այլ ոլորտներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Խորոված անելու սարքավորում և արքեսուարներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական ընկերությունն արտադրում է դրսում խորոված անելու ժամանակակից սարքավորում, ինչպես նաև առաջարկում է մի շարք արքեսուարներ, որոնք հնարավորություն են տալիս խորովածի դիրքի և անհատական այլ կարգավորումներ անել: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ծառայությունների համաձայնագրով:

Ծածկագիր. BOPL20180507003

Լեհական ընկերությունը փնտրում է գործընկերներ

Լեհական ընկերությունն առաջարկում է կենցաղային և դեկորատիվ կերամիկա՝ նպատակ ունենալով համագործակցել արտադրական և տարածման ծառայությունների ներքո: Լեհական ընկերությունը, որը մեծ փորձ ունի կենցաղային և դեկորատիվ կերամիկայի արտադրության ոլորտում, փնտրում է հուսալի գործընկեր՝ արտադրական և տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOPL20170427001

Հարավային Կորեայից հիվանդանոցային մահճակալներ արտադրող ընկերությունը փնտրում է եվրոպացի գործընկերներ

Ընկերությունը Հարավային Կորեայից, որը գործում է հիվանդանոցային մահճակալների ոլորտում 2016 թվականից, ստեղծվել է մարդկանց մի խմբի կողմից, որոնք 10 տարուց ավել աշխատել են միևնույն ոլորտում: Այժմ ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկերներ, ովքեր կօգնեն հաջողությամբ ընդլայնել իր բիզնեսը եվրոպական տարածաշրջանում: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության և տարածման

ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOKR20180320001

Թուրքական ընկերությունը, որն արտադրում է կաթի և կաթնամթերքի սարքավորումներ, փնտրում է դիստրիբյուտորներ

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է կաթի և կաթնամթերքի սարքավորումների արտադրության ոլորտում, ցանկանում է ընդլայնել իր բիզնեսը օտարերկրյա շուկաներում և փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում և Հարավային Աֆրիկայում:

Ծածկագիր. BOTR20151117001

Բուլղարական ընկերությունն առաջարկում է արտադրական համաձայնագրեր՝ թարմ օդի մշակման նորարարական արտադրանքի և տեխնոլոգիայի համար

Բուլղարական ընկերությունը մասնագիտացած է բարձր/պրեմիում դասի օդափոխման և օդորակման համար էներգաարդյունավետ/ խնայող լուծումներում: Առաջարկվող նորարարական համակարգը վերականգնում է տարբեր շենքերում արդյունահանվող օդի ջերմությունը/սառնությունը/խոնավությունը՝ 100%-ով: Նորարարությունը երկու փուլով թերմոդինամիկ ջերմության վերականգնման տեխնոլոգիա է, որն ապահովում է մինչև 100% թարմ օդ: Ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրերի ներքո գործընկերներ, ինչպես օրինակ՝ կինոթատրոնները, թատրոնները, ռեստորանները, բանկերը, հյուրանոցները և այլն:

Ծածկագիր. BOBG20180325001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական թղթե փաթեթներ արտադրողը փնտրում է ստվարաթղթի (քրաֆթ թղթի) մատակարարներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Հացարուկեղենի համար թղթե փաթեթներ արտադրող ռումինական ընկերությունը հետաքրքրված է ստվարաթղթի մատակարարող արտասահմանյան ընկերությունների հետ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

Ծածկագիր. BRRO20170727001

Չեռագործ օձառներ արտադրող ընկերությունը փնտրում է օձառի համար նախատեսված

յուղերի և սարքավորումների մատակարար

Արհեստով զբաղվող իռլանդական բիզնեսն արտադրում է ձեռագործ օճառ և փնտրում է օճառի համար նոր յուղերի, էթերայուղերի և օճառի ստեղծման սարքավորումների մատակարարման աղբյուրներ, որպեսզի համագործակցի տարածման կամ արտադրական համաձայնագրերի ներքո:


Ծածկագիր. BRIE20170323001

Իսպանական գովազդային գործակալությունը փնտրում է ձկան թեմաներով հուշանվերներ

Իսպանական գովազդային գործակալությունը, որը պատասխանատու է տուրիստական տեղեկատվական կենտրոնի և հուշանվերների խանութի համար, փնտրում է եվրոպական արտադրողներ, ովքեր կարող են արտադրել ձկան ձևի ապրանքներ հետևյալ նյութերից՝ կերամիկա, փափուկ գործվածքներ, կոնֆետներ և/կամ շոկոլադ՝ արտադրական համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRES20180108001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Ֆիննական ընկերությունը փնտրում է լիցենզիա առողջապահական բջջային հարթակի համար

Ֆիննական ընկերությունը մշակել է հիվանդների տեղեկատվական բջջային ծառայություն տեղեկատվության հավաքման, վերլուծության և մասնագետների ու շաքարախտով և այլ խրոնիկ հիվանդություններով հիվանդների միջև փոխանակման համար: Այժմ ընկերությունը փնտրում է լիցենզիոն համաձայնագրեր՝ առողջապահական ծառայություններ տրամադրողներ Սկանդինավյան և այլ եվրոպական երկրներում:

Ծածկագիր. TOFI20180419001

ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից առաջարկում է նոր փոքր մոլեկուլային հակաֆիբրոտիկ թերապիա

Միացյալ Թագավորությունում հիմնված ՓՄՁ-ն մշակել է նոր փոքր մոլեկուլ, որը խոչընդոտում է բջիջների ազդանշանային ուղուն, որն էլ իր դերն ունի ֆիբրոզի մեջ: Այս մոլեկուլը ցույց է տվել ուժեղ ազդեցություն, որը զուգորդվում է անվտանգության հետ: Ընկերությունն առաջարկում է այս մոլեկուլը դեղագործական այլ ընկերությունների, հատկապես ֆիբրոզով հետաքրքրվողներին՝ հետագա մշակման և առևտրականացման համար: Նախատեսվում է, որ գործընկերությունը կլինի լիցենզային պայմանագրի կամ տեխնիկական համագործակցության տեսքով:

Ծածկագիր. TOUK20180413001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է հարմարավետ, ջրակայուն նյութ՝ բացօթյա սպորտային սարքավորումներ համար

Մեծ ֆրանսիական ընկերությունը, որը մասնագիտացած է բացօթյա սպորտային սարքավորումների ոլորտում, փնտրում է հարմարավետ, ջրակայուն նյութ, որը կարող է կիրառվել դաշտում՝ այս արտադրանքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու համար: Ընկերությունը փնտրում է լիցենզիոն համաձայագիր կամ տեխնիկական համագործացություն:

Ծածկագիր. TRFR20180420001

Պանրագործությամբ զբաղվող ընկերությունը փնտրում է աղաթթվի արտադրանքը մաքրելու և վերամշակելու տեխնոլոգիա

Չինական ընկերությունը, որը մշակում է բնական ապրանքներ և դրանց թթու քաղվածքները, փնտրում է աղաթթվի արտադրանքը մաքրելու և մշակելու տեխնոլոգիա: Ընկերությունը ցանկանում է համագործակցել գործընկերների հետ՝ հետազոտական և տեխնիկական համագործակցության ներքո:

Ծածկագիր. TRCN20170807001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Հուլիս

04/07/2018	<p>NANOTECHNOLOGY 2018 Matchmaking Event</p> <p>Սալոնիկի (Հունաստան)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառման հիմնական թեմաներն են.</p> <ol style="list-style-type: none">1. Օրգանական էլեկտրոնիկա2. Պլազմոնիկա3. Ֆոտոնիկա4. Էներգիա5. Բիոէլեկտրոնիկա6. Նանոինժեներիա7. Նանո շինարարություն8. Նանոբժշկություն9. Գրաֆեն10. Նանո նյութեր: <p>http://www.nanotextnology.com/index.php/matchmaking-b2b-event-forum</p>
------------	--

04/07/2018	<p>COSM'ING 2018 - International Cosmetic and Biotechnology Brokerage Event</p> <p>Մեն Մալո (Ֆրանսիա)</p> <p>Հետևյալ թեմաները կներկայացվեն հաղորդակցության և ֆլեշ բանակցությունների 4 թեմատիկ սեսիաների միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> • Բիո գործիքներ և բիո ինդիկացիա • Բիոարտադրանք • Բիո ակտիվ հավելումներ • Միկրոբիոմ և շրջափուլեր:
------------	--

Օգոստոս

21/08/2018	<p>gamesmatch@gamescom 2018 – Խաղային արդյունաբերության ոլորտին ուղղված համագործակցության հաստատման միջոցառում</p> <p>Քյոլն (Գերմանիա)</p> <p>Այս միջոցառման ընթացքում ընկերությունները կներկայացնեն վերջին շրջանի իրենց արտադրանքն ու թողարկումները, ինչպես նաև կփնտրեն նոր ծրագրեր և գործընկերներ:</p> <p>https://gamesmatchgamescom2018.b2match.io/</p>
------------	---

27/08/2018	<p>"Nanotechnology and nanomaterials" NANO-2018</p> <p>Կին (Ուկրաինա)</p> <p>Կոնֆերանսն ուղված է նանո-գիտության և նանոտեխնոլոգիաների վերջին նվաճումներին և խթանում է խորքային գիտական քննարկումները գիտնականների և հետազոտողների միջև, որոնք ներկայացնում են տարբեր ոլորտները և տարբեր երկրները:</p> <p>http://nano-conference.iop.kiev.ua/en/</p>
------------	---

Մեպտեմբեր

13/09/2018	<p>Successful in Slovenia 2018</p> <p>(Սլովենիա)</p> <p>Այս միջոցառման հիմնական թեմաներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - Վերականգնվող էներգիայի աղբյուրներ - Շրջակա միջավայր - Մետաղագործություն - Շինարարություն - Փայտամշակում - Էլեկտրական արդյունաբերություն - Պլաստիկ - Լոգիստիկա: <p>https://slovenia2018.b2match.io/</p>	Մեյքե
------------	---	--------------

20/09/2018	<p style="text-align: right;">Թուրին</p> <p>Food for Change B2B, Salone del Gusto 2018 (Բուսալիա)</p> <p>Այս միջոցառման ընթացքում կազմակերպիչները համագործակցում են Slow Food միջազգային ասոցիացիայի հետ և կապեր հաստատում ընկերությունների, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միջև, որոնք ներկայացնում են գյուղմթերքի ոլորտը:</p> <p>https://gusto2018.b2match.io/</p>
21/09/2018	<p>International Brokerage event at construction fair FOR ARCH 2018 Պրահա (Չեխիա)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ընդգրկում է շինարարության բոլոր ոլորտները, ինչպես օրինակ՝ .Ճարտարապետական, նախագծային, շինարարական ինժեներիայի ծառայություններ, .Շինությունների կառուցապատում, .Շինմոնտաժային աշխատանքներ, .Էլեկտրամոնտաժ, .Շինարարական նյութեր, .Պատուհանների արտադրություն, դռներ և աստիճաններ, .Ջեռուցման, ծխնելույզի կառուցվածքներ, .Տրանսպորտ և լոգիստիկա, .Մշակութային ժառանգություն, .Սպիկապատում, Աղյուսապատում, .Հատակներ, տանիքներ, ներկում, .Կայուն շինություններ և Կանաչ շինություններ, .Այլ:</p> <p>http://forarch2018.talkb2b.net/</p>

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Custom/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ Եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: